2025-2026 ՈՒՍՏԱՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

9 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ – տևողությունը՝ 90 րոպե

1. Ի՞նչ է նորմատիվ իրավական ակտը:

1. Կանոնների համակարգ է, որը կարգավորում է հասարակական հարաբերություններ:
2. Օրենք է:
3. Պաշտոնական փաստաթուղթ է, որն ընդունվում է պետության կողմից:
4. Նորմերի համակարգ, որը կարգավորում է պետության հիմնական ոլորտները

2. Հայաստանի Հանրապետությունում ո՞ր տարիքից են արական սեռի քաղաքացիները համարվում նախազորակոչիկներ:

1. 16-18 2. 18-27 3. 15-17 4. 15-18

3. Ի՞նչպես է կոչվել քարանետ մեքենան թուրք-թաթարական լեզուներում:

1. Կատապուլտ 2. Բաբան 3. Բալիստա 4. Թոփ

4.Ինչպե՞ս է կոչվում տարբեր զորատեսակների ստորաբաժանումների միավորումը

1. Զորք 2. Զորամիավորում
3. Բանակ 4. Միավորված զորքեր

5.Ո՞ր համաստեղությունում է գտնվում Բեռռային աստղը:

1. Փոքր արջ 2. Մեծ արջ 3. Վիշապ 4. Կասիոպեա

6. Նախապատրաստական Ի՞նչ աշխատանքեր են անցկացվում հարձակումից առաջ:

1. Կրակային նախապատրաստություն: 2. Զորավաժություն:
3. Մարտական նախապատրաստություն: 4. Դիպուկահարի պատրաստություն:

7.Ինչպե՞ս է բնորոշվում ստրատեգիան:

1. Հին հունարեն տերմին է, որը նշանակում է հրամանատարի արվեստ: Այն ոչ մանրամասնեցված ռազմական ընդհանուր պլան է:
2. Հին հունարեն տերմին է, որը նշանակում է հրամանատարի խորամանկություն: Այն ոչ մանրամասնեցված ռազմական ընդհանուր պլան է:
3. Հին հունարեն տերմին է, որը նշանակում է առաջնորդի արվեստ: Այն մանրամասնեցված և հագեցած ռազմական ընդհանուր պլան է:
4. Լատիներեն տերմին է, որը նշանակում է հրամանատարի արվեստ: Այն մանրամասնեցված ռազմական ընդհանուր պլան է:

8.Ինչպիսի՞ զենք է օդամոիչ հրացանը:

1. Պնևմատիկ 2. Հրազենային 3. Սառը 4. Գազային

9. Հայկական լեռնաշխարհում որպես հեռահար զենք նաև ո՞ր զինատեսակն է օգտագործվել:

1. Տեգը 2. Նիզակը 3. Պարսատիկը 4. Նետը

10. Լուսնի միջոցով տեղանքում կողմնորոշվելիս ո՞ր դեպքում է հնարավոր ավելի ճշգրիտ որոշել հորիզոնի կողմերը.

1.Լիալուսնի 2.Կիսալուսնի 3.Նորալուսնի 4.Մարող լուսնի

11. Ըստ արձանագրության քանի՞ կանգուն է անցել Արգիշտի 2-րդի արձակած նետը:

1. 1500 2. 800 3. 1000 4. 950

12.Համապատասխանեցնե՛լ:

1. Նինվեի ճակատամարտ	ա) 331թ Ք.ա
2. Բաբելոնի ճակատամարտ	բ) 612թ Ք.ա
3. Գավգամելայի ճակատամարտ	գ) 2492թ Ք.ա
4. Խոշաբի ճակատամարտ	դ) 539թ Ք.ա

1. 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
2. 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
3. 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
4. 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

13.Համապատասխանեցնե՛լ:

1. Հովհաննես Հախվերդյան	ա.1920 թ. նոյեմբեր-դեկտեմբեր
2. Քրիստափոր Արարատյան	բ.1920 թ. ապրիլ-նոյեմբեր
3. Ռուբեն Տեր-Մինասյան	գ.1919 թ. մարտ -1920 թթ ապրիլ
4. Դրաստամատ Կանայան	դ.1918 թ. հունիս-1919թ մարտ

1. 1-դ, 2- գ, 3-բ, 4-ա
2. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3. 1-ա ,2-բ, 3-գ, 4-դ
4. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

14.Համապատասխանեցնե՛լ:

1		ա) Խաղողի այգիներ
2		բ) Մրգատու այգիներ
3		գ) Մարգագետին
4		դ) Հիմնական հորիզոնականներ

1. 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
2. 1-բ, 2-գ, 3-բ, 4-գ
3. 1-ա ,2-բ, 3-գ, 4-դ
4. 1-դ, 2-դ, 3-ա, 4-բ

15. Պնևմատիկ զենք արտահայտությունը առաջացել է հին հունարեն «պնևմա» բառից: Ի՞նչ է նշանակում «պնևմա» բառը հին հունարենից թարգմանաբար:

1. օդ
2. ճնշում
3. գազ
4. Կրակ

16. Ըստ «Ինների» օրենքի՝ եթե մարդու մաշկի ողջ մակերեսը ընդունվում է 100%, ապա քանի՞ տոկոսը կկազմի գլխի մակերեսը:

17.Մինչև քանի՞ օր է տևում ջրծաղիկ հիվանդության գաղտնի շրջանը:

18. Մինչև քանի՞ մ/վ-ի է հասնում մրրիկի արագությունը:

19.Պատերազմների ժամանակ սղնախները քանի՞ հազար հեծյալ կարող էին դուրս բերել:

20.Քա՞նի արկ է S-80 տանկի հիմնական սպառազինությունը կազմող 125 մմ հարթափող թնդանոթի մարտալրակազմը: